ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԼԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Գ. ՄԵԻԹԱՐՅԱՆ

Սոցիալական ճանաչողության աղբյուրն աշխատանքն է և աշխատանքի կատեգորիան սոցիոլոգիայում ելակետային է։ Այստեղ «աշխատանք» կատեգորիայի տակ հասկանում ենք նրա տարրական մոդելը, «ընդհանուր բնույթը»։

Մարդկային աշխատանքում գործուն գիտակցությունը, բացի իրականության արտացոլում լինելուց, իր կանխագուշակողական բնույթի շնորհիվ հասնում է նաև գալիքի կանխատեսմանը։ Գնահատելով մարդու զարգացման ընթացքում աշխատանքային գործունեության դերը, Ֆ. Էնգելսը գրել է. «Շնորհիվ ձեռքի, խոսելու օրգանների և ուղեղի համատեղ գործունեության ոչ միայն յուրաքանչյուրի մոտ առանձին, այլ նաև հասարակության սնչ, մարդիկ ձեռք բերեցին ավելի ու ավելի բարդ օպերացիաներ կատարելու, իրենց առջև ավելի ու ավելի բարձր նպատակներ դնելու և դրանց հասնելու ընդունակություն»[1]։ Այս ընդունակությունը ժառանգորդվել, զարգացել և հարստացվել է սերնդից-սերունդ, որով և իրականացվել է հասարակական առաջադիմությունը։ Մարդը կարողացել է գիտակցորեն վերաբերվել շրջապատող աշխարհի հետ այն ժամանակ, երբ ընդունակ է դարձել ճշտորեն բացատրելու և հասկանալու վերջինիս էական կապերը։ Սակայն միայն դա բավական չէ մարդու պահանջմունքներին ու շահերին համապատասխան շրջապատող աշխարհը գիտակցականորեն և նպատակասլաց կերպով վերափոխելու համար։ Մարդը պետք է նախօրոք տեսականորեն պատկերացնի իր գործողությունների հետևանքները, գնահատի շրջապատող միջավայրի ենթադրվող հակազդեցությունները։ Մարդկային կենսագործունեությունը հնարավոր է միայն ապագայի մտային կանխագուշակման հիման վրա, քանի որ մարդու վարքը մշտապես պատճառաբանված է ոչ միայն շրջապատող միջավայրով և նրա փոփոխությամբ, այլև մտային անտիցիպացիայով (իրականությունից առաջ անցնող արտացոլմամբ)։ Սակայն կանխամտածված, «պլանաչափ» գործողություններ կատարելու ընդունակությունը, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, հատուկ է նաև կենդանիների զարգացած տեսակներին, իսկ սաղմնային վիճակում՝ ամենաստորակարգ կենդանիներին, «...բայց բոլոր կենդանիների բոլոր պլանաչափ գործողությունները չկարողացան իրենց կամքի դրոշմը դնել բնության վրա։ Միայն մարդը կարողացավ այդ անել»[2], և որ մեր ամբողջ տիրապետությունը, նրա (բնության—Վ. Մ.) նկատմամբ այն է, որ մենք, ի տարբերություն մյուս բոլոր էակների, կարողանում ենք ճանաչել նրա օրենքները և ճշտորեն կիրառել դրանք»[3]։ Բացահայտելով ճանաչողու-

---

1 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 175։

2 Նույն տեղում, էջ 177—178։

3 Նույն տեղում, էջ 178—179։

թյան հիմնական այդ օրենքը, Ֆ. Էնգելսը ցույց է տվել, որ «...մենք օրեցօր սովորում ենք ավելի ու ավելի ճիշտ հասկանալ բնության օրենքները և ճանաչել նրա բնական ընթացքին մեր ակտիվ միջամտության ինչպես ավելի մոտիկ, այնպես էլ ավելի հեռավոր հետևանքները»[4]։ Մարդկային գիտակցությունը, ճանաչողությունը և նպատակային գործունեությունը, որոնք էմպիրիկ գործունեության, աշխատանքի հետևանքներ են, ձևավորվել ու զարգացել են մարդու էվոլյուցիայի երկարատև պրոցեսում։ Ընդ որում, ճանաչողությունը նախնական շրջանում կապված է եղել անմիջականորեն առարկայական գործունեության հետ, իսկ գիտելիքը կրել է առօրյա բնույթ։ Բայց և այնպես հոգեբանորեն ճանաչողությունը թե՛ տեսական, և թե՛ էմպիրիկ մակարդակներում եղել է մարդկանց անմիջական նպատակային հարաբերություն առարկայական աշխարհի հետ։ Դրա շնորհիվ մարդը կարողացել է պատկերացնել արտաքին առարկաները, արձագանքել դրանց, մտածել նպատակի մասին, այդ պատկերացումներն ու նպատակները (արտաքին աշխարհի արտացոլումը) արտահայտել լեզվի միջոցով, վերջինիս արձագանքել նոր պատկերացումներով ու նպատակներով։ Այս առումով մարդկային ճանաչողությունն օժտված է այն հատկանիշներով[5], որ ա) ոչ գիտակցական, բնազդային արտացոլումից այն անցնում է գիտակցական արտացոլմանն ու հակազդելուն, արձագանքելուն, այսինքն՝ նպատակի ու գործունեության արդյունքների մասին պատկերացումով գործողության. բ) զգայությունների, ընկալումների և մտապատկերումների ձևով անմիջական ու կոնկրետ արտացոլումից անցնում է միջնորդավորված ու վերացական արտացոլմանը՝ մտածողության տրամաբանական օրենքներով. գ) վերացական հասկացություններն ու արտացոլումն արտահայտում է նյութական (և լեզվական) ձևով. դ) ազատվելով պրակտիկայի հետ ունեցած անմիջական կապից, ճանաչողությունը պահպանել է իր կախվածությունը նրանից և հիմնավորվածությունը նրանով։ Բանն այն է, որ գիտակցությունը ծագել է բնության հասարակական-աշխատանքային վերափոխման, հասարակական-ճանաչողական յուրացման մեջ՝ որպես նպատակադիր գործունեություն։ Ծագելով պրակտիկայից, գիտակցությունը գործում է նրա մեջ, ստուգվում և հարստանում նրանով, հասնում պատմականորեն ավելի բարձր մակարդակի. ե) մարդկային արտացոլումը այլևս միայն ուղեղի մեջ նյութական պրոցեսների օբյեկտիվ և առարկայական արտացոլումը չէ, այլ փոխարկվում է հոգեկանի՝ օբյեկտիվ պրոցեսների սուբյեկտիվ արտացոլման։ Մի կողմից՝ այն կապված է սուբյեկտի հետ, որն իր նպատակներին ու պահանջմունքներին համաձայն բնությունը վերափոխելով՝ ենթարկում է իրեն։ Մյուս կողմից՝ այդ արտացոլումը արտաքին ձևից անցնում է հոգեկանի, իսկ վերջինս գոյություն ունի գիտակցության մեջ։

Այս հատկանիշները պետք է դիտել պատմական զարգացման հայեցակետից։ Բանն այն է, որ «Մարդը չի կարող ընդգրկել = արտացոլել = արտապատկերել բնությունն ամբողջովին, լրիվ, սրա «անմիջական ամբողջականությունը», նա կարող է միայն անվերջ մոտենալ դրան, ստեղծելով աբստրակցիաներ, հասկացություններ, օրենքներ, աշխարհի գիտական պատկե-

---

[4] Նույն տեղում, էջ 179։

[5] Л. Живкович, Теория социального отражения, М., 1969, стр. 26—28.

ը և այլն և այլն»[6]։ Եթե ճանաչողության այս ընդհանուր պրոցեսը տարածենք հասարակական երևույթների զարգացման իմացության վրա, ապա կտեսնենք, որ այն հասարակական մտածողության անվերջ մոտեցումն է սոցիալական օբյեկտին՝ իր շարժման հակասություններին առաջացման և դրանց լուծման տևական պրոցեսում։ Սոցիալական ճանաչողությունը ձեռք է բերում երևույթներն ընդհանրացնելու ընդունակություն, նրա օբյեկտն ամբողջանում է պատկերացումների մեջ, իսկ «պատկերացնել էմպիրիկ աշխարհը նշանակում է... էապես փոխել նրա էմպիրիկ ձևը և վերածել այն որևէ ընդհանուրի»[7]։

Ձեռք բերելով էմպիրիկ գիտելիքներ, մարդն իրեն զատում է բնությունից, իսկ ձևավորվող հասկացությունները դառնում են աշխարհի ճանաչողության աստիճաններ, որոնք օգնում են հասկանալու և յուրացնելու այն։ Էմպիրիկ ճանաչողության հիմքը դառնում է արտագրական (պրակտիկ), այն գործունեությունը, որը ենթադրում է նպատակ, պլան, վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ և միջոցառումներ։ Նույն հիմքով էմպիրիկ իմացությունը հասնում է տեսական մակարդակի և հակազդում այդ պրակտիկայի վրա (իրականությունը վերափոխելու իմաստով)։

Ինչպես նշվեց, մարդը բնությունը ճանաչում է հասկացությունների միջոցով, վերացականորեն։ Վերացական ճանաչողությունը բնության պասսիվ արտացոլումից վեր է ածվում բնության վրա իշխելուն։ Քանի որ հասարակական իրականությունը հանդես է գալիս եզակի և անմիջական ձևով, այն նույնաբար չի համընկնում տեսական պատմության հետ, այլ վերջինիս կոնկրետ արտահայտությունն է։ Ավելին. «Թեորետիկ իդեայում (թեորիայի բնագավառում),—գրում է Վ. Ի. Լենինը,—սուբյեկտիվ հասկացությունը (իմացությունը) որպես ընդհանուր և ինքնըստինքյան որոշակիությունից զուրկ, հակադեմ է օբյեկտիվ աշխարհին...։

Պրակտիկ իդեայում (պրակտիկայի բնագավառում) այդ հասկացությունը որպես իրական (գործող) հակակա է իրականին»[8]։ Կարելի է ենթադրել, որ Վ. Ի. Լենինը հասկացության տակ նկատի ունի էմպիրիկ մակարդակից բարձրացած տեսական ճանաչողությունը, գիտակցությունը, որը աշխարհը և՛ արտացոլում է, և՛ կերտում, այսինքն՝ «... աշխարհը չի բավարարում մարդուն և մարդը իր գործողությամբ որոշում է փոխել այն»[9]։ Իմացության զարգացման որոշակի աստիճանում էմպիրիկ իրականության և նրա մասին տեսական օրենքների միջև առաջանում են հակասություններ, որոնք իրենց հերթին հակասություն են ծնում գիտական տեսության մեջ։ Այն լուծվում է հասարակական պրակտիկայում, քանի որ «հասարակական կյանքն ըստ էության գործնական է։ Բոլոր միստերիաները, որոնք տեսությունը տանում են դեպի միստիկականություն, իրենց ռացիոնալ լուծումն են գտնում մարդկային պրակտիկայում և այդ պրակտիկան ըմբռնելու մեջ»[10]։

Հասարակական ճանաչողությունը երկարատև պրոցես է, որի ընթացքում առաջացած հակասությունները հանդես են գալիս որպես հասարակա-

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 221։
7 Гегель, Соч., т. 1, стр. 101.
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 261։
9 Նույն տեղում։
10 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 3։

կան զարգացման շարժիչ ուժ, սոցիալական զարգացման ակտիվ կողմ։ Սոցիալական կյանքի աստիճանական ճանաչման և յուրացման պրոցեսում փոփոխվում են մարդկանց հարաբերությունները, որոնք, ըստ էության, արտադրական են։ Այս առումով պրակտիկան ոչ միայն ձգտումների ու նպատակների աղբյուր է, նպատակադիր գործունեությունն, այլև դրանց իրականացման ոլորտ։ Նպատակները ծնվում են օբյեկտիվ իրականությունից, թեև «սկզբում բնության նկատմամբ թվում են օտար («այլ»)[11]»,— նշել է Վ. Ի. Լենինը։

Սոցիալական ճանաչողությունը զարգանալով չի մնում իդեայի ոլորտում, այլ դրվում է որպես նպատակ, որի գործունեությունն ուղղված է իրականանալուն։

Ի տարբերություն բնության օրենքների գործողության, որտեղ ոչ կամք կա և ոչ էլ գիտակցված նպատակ, մարդկանց ներգործությունը բնության վրա հնարավոր է եղել միայն հասարակական միասնության, հասարակայնորեն կազմակերպված ձևերի միջոցով։ Տեսական ճանաչողության աստիճանական զարգացումը կապված է հասարակական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման հետ։ Նախնադարյան հասարակարգում այն անմիջականորեն կապված է եղել նյութական արտադրության, պրակտիկ գործունեության հետ, անմիջականորեն արտահայտել է արտադրության պահանջներն ու նպատակները, ըմբռնել աշխատանքի միայն մերձավոր հետևանքները, օժտված եղել նաև մոգական-ոգեպաշտական կամ դիցաբանական-կրոնական բովանդակությամբ։ Այնուհանդերձ, տնտեսական բազիսի տվյալ շրջանակներում դա գաղափարական-մշակութային վերնաշենք էր՝ իր օրենքներով։

Դասակարգային հասարակության ձևավորման ժամանակ ճանաչողությունն աստիճանաբար սկսում է հեռանալ նյութական պրակտիկայից։ Համապարփակ դիցաբանական-կրոնական գիտակցությունից անջատվում են հասարակական գիտակցության ձևերը։ Իմացությունը զբաղվում է մարդկային գործողությունների միայն այն հասարակական հետևանքներով, որոնց իրագործումն էլ նկատի է առնվում։ Զարգացած կապիտալիզմի ժամանակ բարձրանում է իմացության մակարդակը, ընդլայնվում են դրա ուսումնասիրության ոլորտները։ Տեսական ճանաչողությունը մշտապես հարստանում է նոր հատկանիշներով՝ կապված հասարակական արտադրության և վերարտադրության, պրակտիկայի զարգացման հետ, որ գիտությունները (իմացությունը) առաջանում և զարգանում են նախ և առաջ արտադրության պահանջով, պայմանավորված են նրանով՝ հակազդելով նրա վրա։

Արտադրության նպատակով կատարած գործողությունների հետևանքները որոշ չափով վաղօրոք հաշվի առնելու համար դարեր են պահանջվել (խոսքը գործողությունների բնական հետևանքների մասին է)։ Սակայն խնդիրը բարդանում է, երբ խոսվում է գործողությունների հասարակական հետևանքների մասին։ Ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, «այս բնագավառում ևս, մենք երկարատև, հաճախ դաժան փորձի միջոցով և պատմական նյութի համեմատության ու վերլուծման միջոցով աստիճանաբար սովորում ենք մեզ համար պարզել մեր արտադրական գործունեության անուղղակի, ավելի հե-

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 228։

ավոր հասարակական հետևանքները, և դրանով էլ հենց մենք հնարավորություն ենք ստանում մեր իշխանությունն ու կարգավորմանը ենթարկել նաև այդ հետևանքները»[12]։ Գործողությունների հասարակական հետևանքների գիտակցումը սոցիալական կյանքում անհրաժեշտության բացահայտումն է, ազատությանը հասնելու հիմնական միջոցը, մի բան, որը էմպիրիկ գիտելիքը չի կարող բավարար չափով ապացուցել։ Սոցիալական անհրաժեշտության ապացույցը պայմանավորված է մարդկային գործունեությամբ (փորձով, աշխատանքով) և պատճառականության գիտակցումով։ Սոցիալական իմացության մեջ այս երկու կողմերի բացակայության դեպքում հազիվ թե կարելի լինի պնդել, որ մտածողության էությունը «հենց բնության փոփոխումն է մարդու կողմից, այլ ոչ թե միայն բնությունն իբրև այդպիսին, և մարդու բանականությունն էլ զարգացել է այն հարաբերությամբ, որ մարդը սովորել է փոխել բնությունը»[13]։

Այսպիսով, մարդու պրակտիկ գործունեությունը միջնորդավորված է սոցիալական ճանաչողությամբ։ Այդ միջնորդավորվածությունը Լ. Ժիվկովիչը[14] իրավացիորեն բացատրում է հետևյալ պատճառներով. ա) հասարակության պատմությունը միջնորդավորված, մտածային ճանաչողություն է (այս միտքը պետք է հասկանալ որոշ վերապահումով, որովհետև վերաբերում է ավելի շուտ հոգևոր, քան նյութական հարաբերությունների պատմությանը)։ Այն, ինչ կատարում են մարդիկ, գիտակցության մեջ արտահայտվում է նպատակի և գաղափարի ձևով, դառնում իրականություն։ Սա ասում անցնող արտացոլումն է. բ) այդ նպատակները և գաղափարները գիտակցության մեջ համակարգվում են գաղափարախոսությունների, հասարակական գիտակցության տարբեր ձևերի մեջ, որոնց շնորհիվ իրականությունը ճանաչվում և վերափոխվում է. գ) գաղափարներն ու իմացությունը ժառանգորդվում և հարստացվում են պատմականորեն. դ) այդ իմացությունը դասակարգային է և պատմականորեն իր բովանդակությունը փոփոխող։

Սոցիալական ճանաչողության բովանդակությունը կապվում է նաև աշխատանքի հասարակական բաժանման պատմական ձևերի հետ։ Իմացության դասակարգային էությունը մասնավոր և ընդհանուր շահերի խզման արտահայտությունն է։ Այս տեսակետից աշխատանքի հասարակական բաժանումը կատարվում է տարբերյնորեն, որի հետևանքով աշխատանքը ճնշում է մարդուն, օտար է նրան։ Բանն այն է, որ աշխատանքի հասարակական բաժանման մինչկոմունիստական ձևերը մարդուն պարտադրում են գործողության այնպիսի շրջան, որից նա չի կարող ազատվել։ Այս շրջանում մարդկանց համատեղ գործունեությամբ բազմապատկված արտադրողական ուժը, նրանց ներկայանում է «ոչ թե որպես իրենց սեփական միացյալ ուժը, այլ որպես ինչ-որ օտար, նրանցից դուրս կանգնած մի իշխանություն, որի ծագումն և զարգացման տենդենցների մասին իրենք ոչինչ չգիտեն, նրանք հետևաբար՝ արդեն չեն կարող իշխել այդ ուժի վրա»[15], որովհետև համատեղ գործունեությունը առաջ է գալիս որպես օբյեկտիվ անհրաժեշտություն։ Զարգացման որոշակի աստիճանում խախտվում է պրակտիկ գործունեության և սոցիալա-

12 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, էջ 180։
13 Նույն տեղում, էջ 235։
14 Л. Живкович, նշվ. աշխ., էջ 95։
15 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 34։

կան իմացության միջև եղած համամասնությունը։ Վերջինս, իհարկե, կտրված չլինելով պրակտիկ գործունեությունից, աստիճանաբար ակտիվություն է ձեռք բերում և հակադրվում հասարակական կյանքի վրա, դառնում է տրնտեսակարգը վերափոխող լծակ, այսինքն՝ հեղափոխականանում է, տալով նոր հասարակարգի ուրվագիծը։ Այսպիսով տեղի է ունենում հասարակական գիտակցության և գործունեության օբյեկտիվ կապերի «խզում»։ Գիտակցությունը դուրս է գալիս էմպիրիկ մակարդակից, բարձրանում տեսական աստիճանի և առաջ մղում արտադրողական ուժերին։ Այն հեղափոխականացնում է այդ ուժերը, հանգեցնում արտադրության հասարակական մասշտաբների ընդլայնման, նրանց հաղորդում նոր բովանդակություն, առաջ բերում աշխատանքի հասարակական բաժանման առավել կատարելագործված ձևեր։ Հեղափոխական գիտակցության ընդհանրացում է, օրինակ, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի այն գաղափարը, որի համաձայն նրանք կոմունիզմը համարում էին «իրական շարժում», այլ ոչ թե «կացություն» կամ «իդեալ»։

Սոցիալական ճանաչողության և պլանային գործունեության փոխադարձ կապի բացահայտման գործում մեծ դեր ունի պատմական առաջադիմության և նրա հիմնական շարժիչ ուժերի բացահայտումը։ Հասարակական առաջադիմության էությունն ու չափանիշը մարքսիզմը տեսնում է արտադրաուժերի և արտադրահարաբերությունների զարգացման, տեխնիկական առաջընթացի, մասսաների ակտիվության բարձրացման և պատմական տեմպերի արագացման մեջ։ «Ամբողջ գործը նրանումն է,—գրել է Վ. Ի. Լենինը,—որ չբավականանանք այն հմտությամբ, որ մշակել է մեր մեջ մեր նախկին փորձը, այլ անպայման ավելի առաջ գնանք, անպայման ավելի շատ բան ձեռք բերենք, անպայման ավելի հեշտ խնդիրներից անցնենք ավելի բարդ խնդիրների։ Առանց դրան ոչ մի առաջադիմություն ընդհանրապես հնարավոր չէ»[16]։

Ինչպես հայտնի է, արտադրության կենտրոնացումն ու համակենտրոնացումը կապիտալիզմի ժամանակ պլանաչափ զարգացման նախադրյալներ են ստեղծում, որոնց կառավարումը, գնալով, բուրժուազիայի հնարավորություններից գերաճում է։ Վ. Ի. Լենինը գրում է. «խոշոր մեքենական ինդուստրիան՝ ի տարբերություն նախընթաց ստադիաների՝ համառորեն պահանջում է, որ արտադրությունը պլանաչափ կարգավորվի և հասարակական վերահսկողություն լինի նրա վրա...»[17]։ Այս պահանջն առաջանում է օբյեկտիվորեն և անհրաժեշտաբար, որովհետև մինչկոմունիստական հասարակարգերում հասարակական արտադրության պլանավորումը կատարվում է տարբերայնորեն, մարդիկ իրենց գործունեությունը հարմարեցնում են պատահականությունների խաղին։ Սակայն դա չի նշանակում, որ մարդիկ բոլորովին չեն պատկերացնում տարերային ուժի մեխանիզմները։ Հասարակական գործողությունների պլանավորման պրոցեսում ճանաչողության և պրակտիկ գործունեության կապը սկզբում դրսևորվում է այնպես, որ կապիտալիստը, չնայած չի տիրապետում ազատ մրցակցության և արժեքի օրենքներին, սակայն ճանաչում է դրանք և ինչ-որ չափով հարմարեցնում իր շահերին, միևնույն ժամանակ ենթարկվելով դրանց։ Սա տեղի է ունենում արտադրության կառավարման ժամանակ, երբ բանվորական ուժն ու գիտակցությունը կենտրոնացվում են։ Տարերային, չծրագրավորված գործոնների կողքին սկսում են

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 235։
17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 707։

գործել պլանավորման գիտակցական գործոններ՝ կապված նպատակասլաց գործունեության հետ։ Աստիճանաբար ձևավորվում են կազմակերպություններ, որոնք, տիրապետելով անցյալի փորձին, ներկայի հնարավորություններին և զարգացման հեռանկարներին, գիտակցաբար հակազդում են հասարակարգի զարգացմանը։ Սա պատմական զարգացման երկարատև պրոցեսի հետևանք է։ Հասարակական առաջին կոլեկտիվի հետ ծագում են պլանավորման սաղմերը։ Տոհմի առաջացմանը զուգընթաց առաջանում են պլանավորման պարզագույն տարրերը։ Այնուհետև պլանավորումը ձեռք է բերում դասակարգային բնույթ և կատարվում է պետության միջամտությամբ։ Պլանավորման պրոցեսի հետագա զարգացումը հանգեցնում է սուբյեկտի դերի մեծացմանը։ Մի կողմից այդ պրոցեսն ընդլայնում է տնտեսական հարաբերությունների շրջանակները, մյուս կողմից՝ ընդգրկում հոգևոր հարաբերություններ։

Հասարակական երևույթների զարգացման նկատմամբ գիտակցական ակտիվությունը որակական նոր բնույթ է ստանում սոցիալիստական հեղափոխությունից հետո։ Բնութագրելով ապագա հասարակարգը, որտեղ արտադրությունը կկարգավորի հասարակությունը, Ֆ. Էնգելսը գրել է. «... արտադրության բոլոր ճյուղերը կդտնվեն ամբողջ հասարակության տնօրինության տակ, այսինքն՝ կվարվեն հօգուտ հասարակական շահերի, ըստ հասարակական պլանի և հասարակության բոլոր անդամների մասնակցությամբ»[18]։ Կապիտալիստների ձեռքից խլելով արտադրողական և հաղորդակցության ուժերը, հասարակությունը դրանցից օգտվի և արդյունքների փոխանակությունն ու բաշխումը կկառավարի «...ընդհանուր առմամբ առկա ռեսուրսներից ու պահանջմունքներից բխող պլանին համապատասխան»[19]։

Անհրաժեշտ է նշել, որ շահագործողական հասարակարգերի զարգացման որոշակի դարաշրջաններում ևս կան հասարակական նպատակասլաց գործողություններ, որոնք որոշակի չափով հաղթահարում են հասարակական օրենքների տարերայնությունը։ Հասարակական զարգացման մեջ պատմական անհրաժեշտությունը գիտակցվել է օբյեկտիվ օրենքներն արտացոլող գիտական տեսությունների և ուսմունքների մեջ, որոնք ցույց են տվել հասարակական զարգացման ուղին։ Դա առանձնապես նկատելի է բուրժուական հասարակարգի կազմավորման և ազգային-ազատագրական շարժումների ժամանակ։ Հենց այս փաստի գիտական ըմբռնումը Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին հնարավորություն տվեց ստեղծելու իրենց հանճարեղ հեղափոխական տեսությունը։ Նրանք ապացուցեցին, որ «Հասարակական ուժերը, բնության ուժերի նման, կուրորեն, բռնի ու քայքայիչ կերպով են գործում, քանի դեռ մենք չենք ճանաչել և հաշվի չենք առնում դրանք»[20]։

Զարգացման ժամանակակից արագ տեմպերը, հասարակական հարաբերությունների և մարդու ինքնարտահայտման եղանակների փոփոխությունները համոզում են, որ գալիքը ճանաչելու համար երբեք այսքան ջանք չի պահանջվել։ Հասարակության նախապատմության ընթացքում, ինչպես ցույց է տվել Կ. Մարքսը, ապագայի արմատները անցյալի մեջ էին, քանի որ այն իշխում

18 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 109։
19 Նույն տեղում, էջ 115։
20 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1967, էջ 375—376։

էր ներկայի վրա։ Մինչդեռ զարգացած սոցիալիզմի պայմաններում, երբ ներկան՝ որպես մարդկանց ստեղծագործական ուժերի զարգացման պրոցես, հանդես է գալիս որպես կարևոր նյութական գործոն, ապագայի մեջ նոր փոփոխություններ է մտցնում։ Դրա շնորհիվ ապագան դադարում է ներկայի ուղղակի շարունակությունը լինելուց։ Այն հասարակական նպատակադրման միջոցով վեր է ածվում ժամանակակից նյութական շահերի ու աշխատավորների ընդհանուր ձգտումների իրական բաղադրամասի։ Սա բացատրվում է անցյալի բնույթով. կոմունիզմի համար անցյալը սոցիալիզմն է, որը նյութապես իշխում է ներկայի վրա, սակայն այլ բովանդակությամբ։ Այն կառուցվում է անցյալի հասարակական գիտակցական գործունեությամբ։

Սոցիալական ճանաչողության և պլանային գործունեության վերադարձ կապը որոշակիորեն փոփոխվող պրոցես է։ Բնական է, որ օրենքների օբյեկտիվ պայմանների ու պահանջների ամբողջությունը ճանաչելը գործնականում հնարավոր չէ, քանի որ դրանք քարացած, միանշանակ և միարժեք չեն։ Իմացությունը պատմականորեն սահմանափակ է, և մարդիկ միշտ էլ գիտական ու տեխնիկական միջոցների պակաս են զգացել։ Սոցիալական պլանավորման խնդիրը տվյալ պայմաններում հնարավորին չափ ճիշտ հասարակական օրենքների գործողության, դրանց վրա ազդող գործոնների ճանաչելն է։ Սա նշանակում է, որ սոցիալական պլանավորման օբյեկտը մեզ միշտ միայն մասամբ է հայտնի դառնում։ Այլ կերպ չի էլ կարող լինել։ Չէ՞ որ այդ օբյեկտը գալիքն է, այն, ինչ դեռևս չկա, կան նրա արմատները միայն, և մեր գիտելիքները դրանց մասին։ Այդ դեպքում է ահա, որ հանդես է գալիս տարբերությունը պատմության մեջ, որը խոչընդոտում է հասարակության ներդաշնակ զարգացումը։ Սակայն ասվածից չի հետևում, որ երևում է պլանավորման օբյեկտի միայն մի կողմը։ Բացահայտելով անհայտ օրենքներն ու զարգացման տենդենցները, պլանավորող սուբյեկտը խորացնում է դրանց բովանդակությունը և գիտական հիմնավորվածության աստիճանը։ Սոցիալիզմի զարգացմանը զուգընթաց մեծանում են օբյեկտիվ օրինաչափությունների և տենդենցների ճանաչման ու օգտագործման ծավալը և հնարավորության աստիճանը։ Սոցիալիզմը գիտականորեն է վերաբերվում ընդարձակվող չափերով առաջադիմող իր վերարտադրության պրոցեսներին։

Հայտնի է, որ սոցիալական պլանավորման հիմքը և ելակետը ժողովրդական տնտեսության զարգացման, նյութական արտադրության պլանավորումն է։ Նյութական արտադրության պրոցեսը գիտատեխնիկական առաջընթացի արդի մակարդակում դառնում է գիտության կիրառման ոլորտ, իսկ գիտությունը՝ արտադրության պրոցեսի բաղադրամաս, անմիջական արտադրողական ուժ։ Գիտական հայտնագործությունները կազմում են արտադրության ժամանակակից, տեխնիկապես հագեցված մեթոդների և նոր գյուտերի հիմքը։ Արտադրության սոցիալիստական եղանակը գիտությունը ծառայեցնում է արտադրությանը, նրա անմիջական պրոցեսին։ Արտադրության զարգացումն իր հերթին բնությունը տեսականորեն նվաճելու, գիտության զարգացման միջոց է։ Իսկ գիտությունը զարգանում է ոչ միայն արտադրության անմիջական պահանջով, մարդու պրակտիկ՝ բնությունը իր պահանջներին համապատասխան վերափոխող գործունեությամբ, այլև իր ներքին տրամաբանությամբ։ Այնպես որ, իմացության մեջ պրակտիկայի վճռական դերը չպետք է բացարձակացնել և ըմբռնել միակողմանիորեն։ Դա հանգեցնում է

ինչպես պրակտիկայի, այնպես էլ իմացության պրոցեսի զարգացման հնարավորությունների սահմանափակմանը։ Վերջին հաշվով իմացությունն առաջադրում է հիպոթեզ, որի նպատակներից ամենաէականը նորը բացատրելն ու անհայտը հայտնագործելն է։ Այս իմաստով պրակտիկայի զարգացման մեջ իմացության էվրիստիկ բովանդակության փաստն ոնտարակուսելի է։ Ճանաչողությունն իր հերթին զարգացման անսպառ նյութ է վերցնում օբյեկտիվ իրականության (ինչպես նաև հասարակական կյանքի) օրինաչափ զարգացումից և այդ զարգացման հիմքում ընկած իրերի ու երևույթների նկրքին, պատճառական կապերից։ Այն իր ծագումով կապված է առաջին հերթին նյութական արտադրության հետ։ Արտադրության զարգացումը զինում է գիտությանը տեխնիկապես։ Իմացության պրոցեսում ձեռք բերված գիտելիքը հանդես է գալիս և՛ որպես պրակտիկ գործունեության, նպատակասլաց, պլանաչափ աշխատանքի հիմք, և՛ որպես նոր երևույթների ու պրոցեսների կանխատեսում։

Ճանաչողության ճշմարտությունը ապացուցվում է պրակտիկայում, հասարակական կենսագործունեության, նյութական արտադրության մեջ։ Ճանաչողությունը բնության վրա հակազդում է, հետևելով վերջինիս օրենքներին և զարգացման հնարավորություններին, կապվում է նյութական աշխատանքի, պլանաչափ գործունեության հետ ու ներթափանցվում նյութական արտադրության մեջ։ Այսպիսով, հասարակության պլանային գործունեության պրոցեսում ճանաչողության մակարդակները հանդես են գալիս իրենց դիալեկտիկական կապի և սերտ միասնության մեջ։

Տեսական ճանաչողությունը սկիզբ է առել էմպիրիկ գիտելիքից, որը մարդկային նպատակասլաց գործունեության նախապայմանն է։ Այս առումով իմացության էմպիրիկ և տեսական մակարդակների սահմանազատումը հարաբերական է, որովհետև պլանավորումը նախ և առաջ նպատակասլացություն է, որն ամենից առաջ արտահայտվում է իդեալապես։ Սոցիալական երևույթների զարգացման պլանավորումը կազմակերպվում է հասարակության զարգացման անհամեմատ բարձր աստիճանում, երբ գիտությունը վեր է ածվում անմիջական արտադրողական ուժի և ճանաչողության էմպիրիկ ու տեսական մակարդակների սահմանները գրեթե հատվում են։ Մյուս կողմից՝ հասարակական կյանքի բարդ երևույթների ուսումնասիրության, ապագան կանխատեսելու, գալիքը պլանավորելու ասպարեզում մարքս-լենինյան սոցիոլոգիան ճշմարիտ ուղեցույց է հանդիսանում։ Այս հանգամանքների շնորհիվ հնարավոր է դառնում գալիքի գիտական պլանավորումը (իհարկե, ոչ բացարձակ իմաստով)։

Երկու հակադիր սիստեմների առկայության ժամանակակից պայմաններում, բնական է, որ սոցիալական երևույթների գիտական պլանավորումը միատեսակ չի կատարվում։ Սոցիալական պլանավորումը այս կամ այն չափով կատարելության կարող է հասնել հասարակական հարաբերությունների ամբողջությունը (տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական, հոգևոր և այլն) ընդգրկելու դեպքում։ Սա հնարավոր է իրականացնել միայն սոցիալիզմի պայմաններում, որտեղ ժողովրդատնտեսական զարգացման խնդիրների հետ մեկտեղ առաջադրվում և լուծվում են նաև սոցիալական խնդիրներ։ Մեր հնգամյա պլաններում վերջիններիս տեսակարար կշիռը

գնալով մեծանում է։ Սոցիալական պլանավորման և նրա մեթոդների կատարելագործման խնդիրը միշտ էլ եղել և մնում է ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ կառավարության ուշադրության կենտրոնում։ Մասնավորապես խնդիր է դրվել պլանավորման գիտական մեթոդները միացնել սոցիալիզմի առավելությունների, պլանավորման պրոցեսում լայնորեն օգտագործել էլեկտրոնային-հաշվողական տեխնիկան, պլանային հաշվարկման ավտոմատացված սիստեմների և գիտատեխնիկական առաջադիմության նորագույն նվաճումները, աշխատավորական լայն զանգվածներին ակտիվորեն ներգրավել պլանավորման գործում։ Այս պայմաններում է միայն հնարավոր սոցիալական գիտական պլանավորումը։

СООТНОШЕНИЕ СОЦИАЛЬНОГО ПОЗНАНИЯ И ПЛАНОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

В. Г. МХИТАРЯН

Резюме

Труд является источником познания социальных явлений. В процессе труда действенное сознание благодаря своему антиципаторному характеру способно предвосхитить будущее. Способность целеполагания развивалась от поколения к поколению. Человек стал сознательно относиться к окружающей действительности на той стадии своего развития, когда способен был понять и объяснить сущность причинно-следственных связей окружающей среды.

Жизнедеятельность и поведение человека постоянно детерминируются не только внешней средой и ее изменениями, но и способностью предвидения. Психологически познание на эмпирическом и теоретическом уровнях является непосредственным отношением к материальному миру.

Познание же социальных явлений есть бесконечное приближение общественного мышления к социальному объекту в процессе возникновения и разрешения противоречий на протяжении своего развития.

В выявлении взаимосвязи социального познания и плановой деятельности важную роль играют исторический прогресс и его движущие силы. Социальное познание в результате развития производительных сил и общественных отношений при социализме превращается в научное обоснование и сознательное планирование общественных процессов.